ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

24 փետրվարի 2016 թվականի N 19-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ՍԻՍԻԱՆԻ ԹԻՎ 1 ՀԱՏՈՒԿ (ՕԺԱՆԴԱԿ) ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի ա/ ենթակետով , ՀՀ աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածով և համաձայն Սեյրան Մակարյանի անձնական դիմումի, **կ ա ր գ ա դ ր ում ե մ՝**

1.2016թ. փետրվարի 25-ից լուծել «Սիսիանի թիվ 1 հատուկ(օժանդակ) դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Սեյրան Մակարյանի հետ կնքված ժամկետային աշխատանքային պայմանագիրը:

Հիմք՝ Ս. Մակարյանի անձնական դիմումը:

2. 2016թ. փետրվարի 25-ից «Սիսիանի թիվ 1 հատուկ (օժանդակ) դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակել Հերմինե Դավթյանին, մինչև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթի անցկացումը:

Հիմք՝ Հերմինե Դավթյանի անձնական դիմումը:

3. Կազմակերպությունում ակտիվների և պարտավորությունների գույքագրում, հանձնում-ընդունում կատարելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Հովհաննիսյան Հարություն	աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ (հանձնաժողովի նախագահ)
Ալեքսանյան Հովիկ	աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ
Ասրյան Աշոտ	աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ
Մակարյան Սեյրան	«Սիսիանի թիվ 1 հատուկ (օժանդակ) դպրոց» ՊՈԱԿ տնօրենի նախկին պաշտոնակատար (հանձնող)
Դավթյան Հերմինե	«Սիսիանի թիվ 1 հատուկ (օժանդակ) դպրոց» ՊՈԱԿ տնօրենի պաշտոնակատար (ընդունող):

4. Հանձնաժողովին՝ գույքագրման և հանձնման-ընդունման աշխատանքներն ավարտել 3-օրյա ժամկետում և արդյունքները ներկայացնել քննարկման:

5. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին, ապահովել սույն կարգադրությունից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2016թ. փետրվարի 24
ք. Կապան